խեղդ[ե]ն և գլխատեն. և յամենայն օր մէկ, երկու և երեք անգամ ղունտախ գտանին ձգեցեալ ի ցերեկի, որպէս զի հրդեհիցի ստամպօլ[1]: (Հ. Պ[օղոս] Վ. [Կ. Պոլսեցի Սիմոնեան] առ Մխիթար. 1731, սեպտեմբերի 7. ի ստամպօլ):

իը.

Մար Իւսուֆ հաչակաւոր ուղղափառ կաթուղիկոսն նեստորականաց աստ է, և ի վաղիւն ելանէ ի ճանապարհ գնալ յԻլպով, և անտի ի Վիէննայ, և անտի ի տեղդ, և ի տեղէդ՝ ի Հռոմ. և աստ յոյժ մեծարեցաւ ի վանականաց և ի հրեշտակաց, մանաւանդ ի մերմէ հրեշտակէ. ապա պատշաճ է պատուել նա և ի մէնջ երբ յայդր լինիցի. զի անտանելի է կրեցեալ հալածումն ի դմանէ սակս հաւատոյ որպէս և գիտէք ի վաղուց ժամանակաց, յորս ոչ միայն լուսաւորեաց զտիգրանակերտն և զնինուէ, այլ ևս շրջակայ վայրս, մինչև ի հասանել ի Հալէպ, ի Դամասկոս, և ի Բաբիլոն. և ես ի մանկութենէ լսէի զդորա գործն. և արդ յատկաւ աչօք տեսանելոյ զանձն արժանի եղէ: (Հ. Յակոբ [Կարինցի Նիրսեսեան] առ Մխիթար. 1731 յուլիսի 15. ի Կ. Պօլսոյ):

իթ.

Զայս նոր լուր լուաք, զի տաճկունքն ի մէջ իւրեանց ասացեալք են, թէ ղըզլպաշի թագաւորն զհամարձակութիւն տուեալ է մօսքօվին դէպ ի Հինդիստան եղեալ իւր երկրացն տիրել: Եւ այս տաճկացն իցէ ընդդէմ. և երևեալ իցէ սոցա վերստին աւերիլ ընդ նմա: (Հ. Պ[օղոս] Վ. առ Մխիթար. 1832. յունիս 13. ի Ղալաթիա):

լ.

Կոստանդինուպօլիս սաստիկ մահ է ընկած, որքան ժամանակ է մինչև ցայժմ, դեռ ևս գոյ, որովհետև էլչիներն երկիւղէ մահուան փախած են...: Ղզլպաշին պատերազմի որպիսութիւնն մինչև ցայսօր ճշմարիտ բան ոչ գոյ. միայն ոմանք ասեն թէ հաշտութիւն և խաղաղութիւն է. և այս իմայ որ ղզլպաշի Էլչին ստամբօլ առաջագոյն բանտն էր, այժմ խանած են և մեծագոյն պատուով ուղղեվորած առ իւրայինսն, և մի ևս Էլչի նորագոյն է եկած ստամբօլ, այսպիսեօքս յայտնի նշան է հաշտութեան: (Խաչիկ Յակոբեան առ Մխիթար. 1732 Հոկտ. 12. Իզմիր):

լա.

Արդ տեղիս որպիսութիւնն, նշան վատ երևայ, զի օր ըստ օրէ իբրև պատիժ երևայ, զի այլազգի դատաստանն վերացեալ է, առաւել նեղութեան և ճգնաց միջի են ազգն հայոց, իբրև իսրայելացիք ի ձեռս փարաւոնի: Զի բազում մարդիկք տնով չւեցին աստի, ոմանք գնալով Իզմիր, ոմանք ի Կոստանդինուպօլիս, և ոմանք ի տրապիզոն, ոմանք ղըրմ և ոմանք այլ ուրեք. իսկ մնացեալքն այլ հնար որոնեն չուելոյ: (Հ. Յակոբ առ Մխիթար. 1732 դեկտ. 10. [Կարին?]):

լբ.

Լուսաւորչայ ժամն սկսան ի դեկտ. 13... և կապուտիկն գրագիր է ի վերայ մշակաց, որք վասն շինութեան եկեղեցւոյն բանին: (Հ. Պ[օղոս] Վ. առ Մխիթար. 1732 դեկտ. 24. [Կ. Պոլիս]):

---

1. Սուլթան Մահմուտ Ա.ի ժամանակն է: